

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 30.06.2014թ.

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ս.Դարբինյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ՝ Ս.Աղաբեկյանը, Ա.Հարությունյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Դոխոյանը, Ա.Ափինյանը, Ա.Մատինյանը, Ա.Օհանյանը, Ս.Ղամբարյանը, Կ.Պառավյանը, Դ.Սիմոնյանը, Ա.Խաչատրյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին ավագանու անդամներ՝ Գ.Քալանթարյանը, Հ.Մովսիսյանը, Գ.Շահինյանը, Վ.Դավիթավյանը, Խ.Վարդանյանը, Ա.Այվազյանը, Ս.Հակոբյանը, Ա.Փելեշյանը:

Նիստին մասնակցում էին նաև Ն.Սարգսյանը, Գ.Սիմոնյանը, Հր.Նազարյանը, Գ.Մացակյանը, Գ.Պառավյանը, Ա.Իսախրյանը, Ա.Սուքիասյանը, Ա.Ղուկասյանը, Լ.Ստեփանյանը, Տ.Գրիգորյանը, Է.Արզումանյանը, Ա.Վերանյանը, ՁԼՄ-ների, ՀԿ-ների և ազգաբնակչության ներկայացուցիչներ:

Միաձայն քվեարկությամբ նիստն սկսվեց:

Մինչ օրակարգի հաստատումը ավագանու անդամ Ա.Խաչատրյանն առաջարկեց օրակարգից հանել «Վանաձորի համայնքի կողմից բնակարան ձեռք բերելու և Հասմիկ Միքայելի Սահակյանի ընտանիքին բնակարաններ վարձակալությամբ հատկացնելու մասին» 4-րդ հարցը:

Քվեարկությամբ՝ դեմ՝ 10, կողմ՝ 1 (Ա.Խաչատրյան) առաջարկությունը չընդունվեց:

Այնուհետև ներկայացվեց նիստի օրակարգը:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 10, դեմ՝ 1 (Ա.Խաչատրյան) հաստատվեց հետևյալ օրակարգը:

Օր ա կ ա ր գ՝

1. Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Վանաձորի համայնքի ավագանու 2014 թվականի մայիսի 30-ի թիվ 30-Ա որոշման հավելվածն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Գ.Սիմոնյան

2. Վանաձորի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Վանաձորի համայնքի 2014թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /նախագիծ 1/

զեկ.՝ Ա.Սուքիասյան

3. Վանաձորի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Վանաձորի համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /նախագիծ 2/

զեկ.՝ Ա.Սուքիասյան

4. Վանաձորի համայնքի կողմից բնակարան ձեռք բերելու և Հասմիկ Միքայելի Սահակյանի ընտանիքին բնակարաններ վարձակալությամբ հատկացնելու մասին

զեկ.՝ Գ.Պառավյան

5. ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը հասարակական կառուցապատման հողամաս անհատույց /մշտական/ օգտագործման տրամադրելու մասին

զեկ.՝ Տ.Պապանյան

6. Հայաստանի գրողների միության Հովհ.Թումանյանի անվան Լոռու մարզային բաժանմունքին անհատույց օգտագործման հանձնված տարածքի պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ.՝ Ա.Իսախրյան

1.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Վանաձորի համայնքի ավագանու 2014 թվականի մայիսի 30-ի թիվ 30-Ա որոշման հավելվածն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Գ.Սիմոնյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

2.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Վանաձորի համայնքի 2014թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /նախագիծ 1/ զեկ.՝ Ա.Սուքիասյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

3.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Վանաձորի համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /նախագիծ 2/ զեկ.՝ Ա.Ավագյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

Մինչ 4-րդ հարցի ներկայացնելը, ավագանու անդամ Ա.Խաչատրյանը հայտարարեց, որ ինքը դեմ է հարցին ու քանի որ այն օրակարգից հանելու իր առաջարկը չընդունվեց, նիստի հետագա աշխատանքին չի մասնակցի և լքեց նիստերի դահլիճը:

Դրա հետևանքով նիստը դարձավ ոչ իրավազոր և ընդհատվեց մինչ հաջորդ օրը:

2014թ. հուլիսի 1-ին Վանաձորի համայնքի ավագանին շարունակեց 2014թ. հունիսի 30-ին սկսված և դադարեցված հերթական նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ս.Դարբինյանը: Մասնակցում էին ավագանու անդամներ՝ Գ.Քալանթարյանը, Ս.Աղաբեկյանը, Ա.Հարությունյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Դոխոյանը, Վ.Դավիթավյանը, Գ.Շահինյանը, Ա.Ափինյանը, Ա.Մատինյանը, Ս.Հակոբյանը, Ա.Փելեշյանը, Ա.Օհանյանը, Ս.Ղամբարյանը, Կ.Պառավյանը, Դ.Սիմոնյանը, Ա.Խաչատրյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին ավագանու անդամներ՝ Հ.Մովսիսյանը, Խ.Վարդանյանը, Ա.Այվազյանը:

Միաձայն քվեարկությամբ նիստն սկսվեց:

Միաձայն կողմ քվեարկությամբ որոշվեց շարունակել նախորդ օրվա հաստատված օրակարգի քննարկումը:

4.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի կողմից բնակարան ձեռք բերելու և Հասմիկ Միքայելի Սահակյանի ընտանիքին բնակարաններ վարձակալությամբ հատկացնելու մասին

զեկ.՝ Գ.Պառավյան

Ծավալված մտքերի փոխանակմանը մասնակցեցին ավագանու անդամներ Ա.Մատինյանը, Գ.Քալանթարյանը, Ս.Աղաբեկյանը, իսկ ավագանու անդամ Վ.Դավիթավյանը ողջունելով համաքաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանը միտված քաղաքապետարանի յուրաքանչյուր քայլը, առաջարկեց հետայսու բյուջեից ծախսվող գումարները ծառայեցնել առավել մեծ թվով բնակիչների հուզող հարցերի կարգավորման նպատակներին: Ավագանու

անդամ Ա.Օհանյանն իր գործընկերներին կոչ արեց պաշտպանել քաղաքապետարանի նախաձեռնությանն ու հաշվի առնելով Ա.Սահակյանի երկարամյա անբասիր աշխատանքը Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարանում, ինչպես նաև համալսարանի ղեկավարության միջնորդագիրն ու հարցին տալ դրական լուծում:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 14, դեմ՝ 1 (Ա.Խաչատրյան), ձեռնպահ՝ 1 (Ա.Մատինյան) ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

5.ԼՍԵՑԻՆ - ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը հասարակական կառուցապատման հողամաս անհատույց /մշտական/ օգտագործման տրամադրելու մասին
զեկ.՝ Տ.Պապանյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 13, (Ա.Խաչատրյանը, Վ.Դոխոյանը և Վ.Դավիթավյանը քվեարկությանը չմասնակցեցին), ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

6.ԼՍԵՑԻՆ - Հայաստանի գրողների միության Հովհ.Թումանյանի անվան Լոռու մարզային բաժանմունքին անհատույց օգտագործման հանձնված տարածքի պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին
զեկ.՝ Ա.Իսպիրյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 13, (Ա.Խաչատրյանը, Վ.Դոխոյանը և Վ.Դավիթավյանը քվեարկությանը չմասնակցեցին), ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

Ավագանու անդամներ՝

Գ.Քալանթարյան Ս.Ղամբարյան

Ա.Հարությունյան Դ.Սիմոնյան

Ա.Օհանյան Ս.Աղաբեկյան

Կ.Պառավյան Վ.Դավիթավյան

Վ.Դոխոյան Գ.Շահինյան

Ս.Հակոբյան Ա.Գրիգորյան

Ա.Փելեշյան Ա.Ափինյան

Ա.Խաչատրյան Ա.Մատինյան

Համայնքի ղեկավար՝
ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց Հրահատ Նազարյանը _____